ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Օ-09.06.01/12
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

քաղ. Երևան «01»«փետրվար»2022թ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Վ. Գասպարյանի (այսուհետ՝ նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրենի՝ Ա. Սարգսյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի <<ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> թիվ 2121-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), 09.06.01.«12. Դպրոցականների օլիմպիադաների անցկացում» ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր), օլիմպիդաների կազմակերպման գործընթացն իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև 48000000 (քառասունութ միլիոն) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. սույն պայմանագրի 2.4.4 կետում նշված ժամկետներում կազմակերպության կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը,

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, նախարարությունը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ կենտրոնի ներկայացրած կատարողական հաշվետվությունները,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. Պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները նախարարության կողմից ընդունվելուց հետո, կազմակերպությունը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները /խնայողությունները/ վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ե տ ա կ ա ն մ ա ր մ ի ն	**Կ ա զ մ ա կ ե ր պ ո ւ թ յ ո ւ ն**
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	«ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,	ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց»
Կառավարական տուն 2	ՊՈԱԿ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ք. Երևան, Ազատության պողոտա 2-րդ նրբ.հ.2
Հ/Հ 900011005163	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02698732	Հ/Հ 900018001835
	ՀՎՀՀ 00801524
Նախարարության գլխավոր քարտուղարի	Տնօրեն
պարտականությունները կատարող՝	
_____ Վ. Գասպարյան	_____ Ա. Սարգսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված
«01» «փետրվար» 2022թ
կնքված թիվ Օ-09.06.01/12 պայմանագրի

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ

2022 **թվականի դպրոցականների առարկայական հանրապետական և միջազգային օլիմպիադաների միջոցառումներ**

N N /կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	*համառոտ բովանդակությունը*	*կատարման ենթակա գործառույթների նկարագիրը*	*ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները*	*վերջնա-ժամկետը*	*պահանջվող գումարը*
1	Դպրոցականների օլիմպիադաների անցկացում /ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 5-ի N 280-Ն հրամանով հաստատված « ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման » կարգով/	Դպրոցականների առարկայական հանրապետական օլիմպիադաների **դպրոցական փուլի** օնլայն կազմակերպում յոթ առարկաներից:	-2021թ. դեկտեմբերին անցկացված դպրոցական փուլի յոթ առարկաների պատասխանների թերթիկների հավաքագրում և ստուգում համապատասխան հատուկ ծրագրի և սարքերի /պատճենամուտ/ միջոցով: - ստուգման արդյունքների ամփոփում և հրապարակում www.olymp.am կայքում, - առաջին փուլի արդյունքների մշակում ըստ մարզերի և միավորների, -արդյունքների հրապարակում www.olymp.am կայքում - 2022-2023 ուստարվա հանրապետական օլիմպիադաների մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն և աստղագիտություն առարկաների դպրոցական փուլի ՀՀ բոլոր դպրոցների մասնակիցների ցուցակների հավաքագրում և հրապարակում	Շնորհալի և ստեղծագործ կարողություններով օժտված աշակերտների հայտնաբերում, նրանց մոտ ուսումնական առարկաների նկատմամբ լրացուցիչ հետաքրքրությունների առաջացում, մասնագիտական կողմնորոշման խթանում:	ըստ ԿԳՄՍ նախարարության հաստատած ժամանակացույցի	1570000

			www.olymp.am կայքում /մոտ 60000 աշակերտ/, -պատասխանների թերթիկների տպագրություն /մոտ 60000 հատ/ և առաքում հանրակրթական դպրոցներ, -հանձնաժողովների նախագահների կողմից կազմած առաջադրանքները ընթացակարգով սահմանված օրերին՝ օլիմպիադան սկսելուց մեկ ժամ առաջ, տրամադրում մարզային ներկայացուցիչներին,			
2	Մարզային փուլի կազմակերպում	Դպրոցականների առարկայական հանրապետական օլիմպիադաների **մարզային փուլի** կազմակերպում 16 առարկաներից:	- 2021-2022 ուստարվա հանրապետական օլիմպիադաների մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն և աստղագիտություն առարկաների մարզային փուլի մասնակիցների ցուցակների հրապարակում www.olymp.am կայքում, - կենսաբանություն առարկայի և մաթեմատիկա առարկայի 5-7-րդ դասարանների մարզային փուլի մասնակիցների օնլայն անցկացվող օլիմպիադաների պատասխանների թերթիկների առաքում մարզային ներկայացուցիչներին, - հանձնաժողովների նախագահների կողմից կազմած առաջադրանքները ընթացակարգով սահմանված օրերին՝ օլիմպիադան սկսելուց մեկ ժամ առաջ, տրամադրում մարզային ներկայացուցիչներին, -կենսաբանություն առարկայի և մաթեմատիկա առարկայի 5-7-րդ		Ըստ ԿԳՄՍ նախարարության հաստատած ժամանակացույցի	780000

			դասարանների պատասխանների թերթիկների հավաքագրում և ստուգում համապատասխան հատուկ ծրագրի և սարքերի /պատճենամուտ/ միջոցով, - վեց առարկաների առաջադրանքների մարզերում ստուգված արդյունքների հավաքագրում, - երկրորդ փուլի արդյունքների մշակում ըստ մարզերի և միավորների, - արդյունքների հրապարակում www.olymp.am կայքում, - մյուս 9 առարկաների հանձնաժողովների նախագահների կողմից կազմած առաջադրանքների տրամադրում մարզային ներկայացուցիչներին՝ ԿԳՄՍ նախարարի հրամանով սահմանված օրերին:			
3	Հանրապետական փուլի կազմակերպում	Դպրոցականների առարկայական հանրապետական օլիմպիադաների **հանրապետական փուլի** կազմակերպում 16 առարկաներից:	- 2021-2022 ուստարվա հանրապետական օլիմպիադաների 16 առարկաների հանրապետական փուլի մասնակիցների ցուցակների հավաքագրում և հրապարակում www.olymp.am կայքում, -հանձնաժողովների նախագահների կողմից կազմած առաջադրանքների տրամադրում օլիմպիադայի պատասխանատուներին՝ ԿԳՄՍ նախարարի հրամանով սահմանված օրերին, -հանրապետական փուլի արդյունքների մշակում ըստ առարկաների և միավորների, -արդյունքների հրապարակում www.olymp.am կայքում, -օլիմպիադաների անցկացման համար	Առարկայական հանձնաժողովների գնահատման հիման վրա լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտներին ՀՀ ԿԳՄՍ նախարարության դիպլոմներով և գովասանագրերով պարգևատրում:	ըստ ԿԳՄՍ նախարարության հաստատած ժամանակացույցի	11995430

		համապատասխան տարածքների և գրենական պիտուքների ապահովում, - մարզերից եկած մասնակիցների գիշերակացի կազմակերպում և անվտանգության ապահովում, - օլիմպիադայի մասնակիցների սննդի կազմակերպում, ընդ որում՝ -գիշերակացից օգտվող մասնակիցների համար օրը չորս անգամ, մյուս մասնակիցների համար երկու անգամ, - օլիմպիադաների անցկացման ընթացքում սենյակներում հսկիչ-կազմակերպիչների ապահովում /յուրաքանչյուր 30 մասնակցի համար 1 հսկիչ- կազմակերպիչ հաշվարկով/, -ծածկագրված տետրերի և գրիչների տրամադրում, -առարկայական հանձնաժողովների կողմից հաղթող ճանաչված մասնակիցներին ԿԳՄՍ նախարարի կողմից դիպլոմ-գովասանագրերի տրամադրում, - բոլոր մասնակիցներին ԿԳՄՍ նախարարի կողմից մասնակցության վկայականների տրամադրում, - քիմիա և կենսաբանություն առարկաների փորձարարական փուլի համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերում, -հանձնաժողովների անդամների և գիշերող մասնակիցների տրանսպորտային տեղափոխման կազմակերպում, -առարկայական հանձնաժողովների անդամների աշխատավարձի վճարում			

			/յուրաքանչյուր տետրի ստուգման համար առնվազն 3000 դրամ/, -հանձնաժողովների բնական գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ գրասենյակային տարածքներով ապահովում, սարքեր-սարքավորումների, գրասենյակային և այլ նյութերի ու պարագաների տրամադրում:			
4	Միջազգային թիմերի ձևավորում	ՀՀ առարկայական միջազգային թիմերի նախապատրաստում /Միջազգային թիմերի հավակնորդների հետ լրացուցիչ պարապմունքների կազմակերպում և միջազգային օլիմպիադաների մասնակիցների ընտրություն/:	-հանրապետական փուլի 10-12-րդ դասարանների դիպլոմակիրների հետ լրացուցիչ պարապմունքների անցկացում, -միջազգային օլիմպիադաների յոթ թիմերի ձևավորում, -միջազգային օլիմպիադաների թիմերի հետ լիացուցիչ պարապմունքներ կազմակերպած մասնագետների վարձատրություն /կենսաբանություն առարկայի համար 6 ամիս, իսկ մյուս 6 առարկաների հաշվարկով 4 ամիս, ամսական 150000-ական դրամ/:		01.08.2022թ.	5500000
5	Միջազգային օլիմպիադաներին ՀՀ թիմերի մասնակցության կազմակերպում:	Միջազգային օլիմպիադաներին ՀՀ թիմերի մասնակցության կազմակերպում:	- Միջազգային օլիմպիադաներին ՀՀ թիմերի մասնակցության ապահովում, - միջազգային օլիմպիադաների մասնակից ՀՀ թիմերի ավիատոմսերի, վիզաների, բուժապահովագրության ձեռքբերում, -մասնակցության վճարների տրամադրում:	-միջազգային օլիմպիադաներին ավելի արդյունավետ մասնակցություն, - ձեռք բերված արդյունքների համեմատում նախորդ տարիների արդյունքների հետ - հաղթող մասնակիցների հետ պարապմունքներ անցկացնող մասնագետների խրախուսում:	ըստ միջազգային առարկայական կազմկոմիտեների հաստատած ժամանակացույցի	22055900
	1-5 կետերի աշխատանքների կազմակերպում	1-5 կետերի աշխատանքների կազմակերպում	-1-5 կետերի աշխատանքների կազմակերպում, անհրաժեշտ նյութերի, սարքավորումների և ծառայությունների	Աշխատանքների անթերի կազմակերպում: Հաշվետվությունների և	30.12.2022թ.	2040000

			ձեռքբերում, համապատասխան պայմանագրերի կնքում, - առարկայական օլիմպիադաների խնդրագրքերի և գրքույկների հրատարակում, -հաշվետվությունների ներկայացում:	վերլուծական աշխատանքների արդյուքում օլիմպիական գործընթացի շարունակականության արդյունավետության ապահովում: Առարկայական օլիմպիադաների 2 գրքույկների հրատարակում:		
	olymp.am կայքի վարում, համացանցի օգտագործմամբ հանրապետական օլիմպիադաների աշխատանքների կազմակերպում և այլն	olymp.am կայքի վարում, համացանցի օգտագործմամբ հանրապետական օլիմպիադաների աշխատանքների կազմակերպում և այլն	-olymp.am կայքի թարմացում, օլիմպիադաների մասին տեղեկությունների, արդյունքների, հայտարարությունների տեղադրում, -մաթեմատիկա, ֆիզիկա, կենսաբանություն, ինֆորմատիկա, քիմիա, աստղագիտություն, աշխարհագրություն առարկաների օլիմպիադաների առաջին և երկրորդ փուլերի կազմակերպում համացանցի օգտագործմամբ՝ ապահովելով աշակերտների զանգվածային մասնակցություն, -միջազգային օլիմպիադաների մասին բազմակողմանի տեղեկությունների ապահովում, -օլիմպիադաների բոլոր փուլերի արդյունքների մշակում, -համեմատական վերլուծությունների կատարում, - Հանրապետական և միջազգային օլիմպիադաների մասին ամբողջական տեղեկատվությունների /ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամաններ, ընթացակարգեր, տարբեր փուլերի մասնակիցների անուններ, առաջադրանքներ և պատասխաններ, արդյունքներ, դիպլոմակիրներ,	Օլիմպիադաների նկատմամբ աշակերտների մոտ հետաքրքրությունների ստեղծում և զարգացում: Հանրապետական և միջազգային օլիմպիադաների մասին լիարժեք տեղեկությունների ապահովում:	30.12.2022թ.	2554100

			միջազգային օլիմպիադաների ՀՀ թիմեր, անցկացման վայրեր և ժամկետներ/ տեղադրում olymp.am կայքում:			
Ընդամենը						48000000

Պ ե տ ա կ ա ն մ ա ր մ ի ն

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005163
ՀՎՀՀ 02698732

Նախարարության գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող

_____ Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կ ա զ մ ա կ ե ր պ ո ւ թ յ ո ւ ն

«ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան
ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ
ք. Երևան, Ազատության պողոտա 2-րդ նրբ.հ.2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001835
ՀՎՀՀ 00801524

Տնօրեն՝

_____ Ա. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ